

պումն այս վասն հարկաւորութեան այսպէս պահանջեաց: Ուստի եւ զայս վկայական գիրս կնքեալ կնքով իմով՝ ետու ի ձեռն այս նորընծայ Տէր Ստեփաննոս Աթանտիլեան կոչեցեալ ֆահանային, զի պատեհաւոր ժամու հաճոյացի տեսող հարց եւ եղբարց եւն:

Գրեցաւ եւ տրեցաւ յԱխցիայ ընդ հովանեաւ սուրբ Խաչի եկեղեցւոյ

Յամի Տեառն 1764: եւ ըստ Հայկազնեան թուականիս ՌՄԺԳ ի յունիսի 28:

Ախալցխայի Հայերու մէջ կաթողիկէ հաւատքին այս արագ ծաւալումն Էջմիածնի Սիմէոն կաթողիկոսը բորբոքեց այնչափ, որ ջանաց զանոնք բռնութեամբ յետս դարձնելու համար հարկաւոր «ֆերման»ներ հանել տալ Պոլսոյ Սուլթանէն, ինչպէս որ յաջողեցաւ: Այս մասին Սիմէոնի Յիշատակարանը կը պատմէ (էջ 155): Սիմէոն (1765 Մարտ 25ի արձանագրութեան համեմատ) Մահտեսի Եօնան գործակալը Պոլիս ղրկեց «վասն անիծելոյն եւ պղծոյն Գէորգեայ չարեացն, նաեւ յաղագս ամենից պիղծ աղթարմայիցն (= կաթողիկէայ Հայք), որք յամենայն տեղիս հոտեալք՝ եւ զբազումս հոտեցուցանեն... քանզի ի գնալն հանեալ էր նա անդ զֆերմանն, որ վասն Ախալցխայու եւ անդէն եղեալ պիղծ աղթարմայիցն եւ չիք Գէորգին եւ չար սեւագլխոցն ի վերայ Ախալցխայու Հասան փաշային... որպէս զի զչիք Գէորգն հանդերձ միւս չար սեւագլխովքն ի սուրբ Աթոռս աքսորեսցէ, եւ զերիս զեկեղեցիսն յաղթարմայիցն առեալ Հայոց տացէ. եւ